ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 6, 1961 Общественные науки

Վ. Ն. Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը մեծ ուշադրություն են նվիրում արտադրության տեղաբաշխման բարելավման, միութենական ռեսպուբլիկաների և տնտեսական մյուս շրջանների ժողովրդական տնտեսության ճիշտ մասնագիտացման և կոմպլեքսային զարգացման, միջշրջանային ու ներշրջանային տնտեսական կապերի ռացիոնալացման հարցերին։ Միջշրջանային տնտեսական կապերի զարգացումն ու կատարելագործումը անխզելիորեն կապված են սոցիալիստական հասարակության աշխատանքի բաժանման հետագա ընդլայնման հետ։

Տնտեսական կապերը միութենական ռեսպուբլիկաների ու տնտեսական շրջանների միջև հանդիսանում են սոցիալիստական վերարտադրության հասարակական պրոցեսում նրանց փոխադարձ հարաբերությունների խնդիրը։ Արդյունաբերության և շինարարության ղեկավարման վերակառուցման և վարչա-տնտեսական շրջանների կազմավորման շնորհիվ ի հայտ եկան աշխատանքի հասարակական բաժանման նոր հնարավորություններ և ստեղծվեցին բարենպաստ պայմաններ միջշրջանային տնտեսական կապերի ավելի ռացիոնալ սիստեմ կազմակերպելու համար։

Միջշրջանային տնտեսական կապերի օբյեկտիվ անհրաժեշտությունը թելադրվում է, ամենից առաջ, աշխատանքի հասարակական բաժանման առկայությամբ, որտեղ աշխատանքի տերիտորիալ բաժանումը հանդես է գալիս որպես նրա արտահայտման ձևերից մեկը։ Աշխատանքի հասարակական բաժանումը դա այն հզոր ուժն է, որը տնտեսական տեսակետից երկիրը բաժանում է յուրօրինակ մասերի և դրա հետ միասին նրանց շաղկապում է տնտեսական կապերով։

Սոցիալիստական տերիտորիալ աշխատանքի բաժանումը նախատեսում է միութենական ռեսպուբլիկաների և տնտեսական շրջանների մասնագիտացումը արտադրության այն բնագավառներում, որոնց զարգացումը նպատակահարմար է տեղական բնական և աշխատանքային ռեսուրսների ավելի էֆեկտիվ օգտագործման տեսակետից՝ ամբողջ երկրի արտադրական ուժերի ավելի արագ զարգացման նպատակով։

Միջշրջանային տնտեսական կապերի անհրաժեշտությունն այնուհետև պայմանավորվում է հասարակական արտադրության բուռն աճով, որը հանգեցնում է տնտեսական շրջանների միջև ինչպես արտադրության միջոցների, այնպես էլ սպառման ապրանքների փոխանակության ընդլայնմանը։

Համաձայն ՍՄԿՊ XXI համագումարի և ՍՄԿՊ ԿԿ Հուլիսյան պլենումի որոշումների սոցիալիստական հասարակության զարգացման տվյալ փուլում առանձնակի նշանակություն ունեն գիտության նվաճումների և առաջավոր տեխնիկայի ներդրման հիման վրա արտադրության անընդհատ կատարելա-

գործման, արտադրության ավտոմատացման ու կոմպլեքսային մեքենայացման լայն զարգացման հարցերը։ Բնական է, որ այս հարցերի լուծումը ամեն մի տնտեսական շրջանում հնարավոր է միայն միջշրջանային և միջռեսպուբլիկական տնտեսական սերտ կապերի առկայության դեպքում։

Տնտեսական կապերի բնույթը կախված է տվյալ հասարակության մեջ գերիշխող արտադրական հարաբերություններից։ Ինչպես հայտնի է, կապիտալիստական հասարակարգում տնտեսական կապերը շրջանների միջև, ինչպես նաև առանձին վերցրած երկրի շրջանների ներսում, կրում են անտագոնիստական բնույթ, որի պայմաններում տնտեսական տեսակետից հետամնաց շրջանները ենթակա են դառնում արդյունաբերական ավելի զարգացած տնտեսական շրջաններին։ Ընդսմին տնտեսական շրջանների զարգացումը տեղի է ունենում տարերայնորեն և խիստ անհամաչափ կերպով։

Միջշրջանային տնտեսական կապերի հարցի ուսումնասիրությունը ունի կարևոր նշանակություն երկրի ճիշտ, գիտականորեն հիմնավորված շրջանացման համար։

Միաժամանակ պետք է նշել, որ տնտեսական կապերի բացահայտումն ու վերլուծությունը շատ բարդ խնդիր է։ Բանն այն է, որ այդ կապերը արտադրության առանձին ճյուղերում և տնտեսական շրջաններում տարբեր են հավասարամեծ չեն և աշխատանքի տերիտորիալ բաժանման պայմաններում կազմում են բարդ ցանց ամբողջ երկրի տնտեսական քարտեզի վրա։

Տվյալ հոդվածում փորձ է կատարվում համառոտակի կերպով վերլուծելու Հայկական ՍՍՌ տնտեսական կապերի վիճակը, որոշելու այդ կապերի հիմնական տարրերը, նրանց կառուցվածքը, ծավալը և բաշխումը ըստ միութենական ռեսպուբլիկաների և տնտեսական շրջանների։ Հոդվածում լայնորեն օգտագործված են միջշրջանային կապերին վերաբերվող հաշվառման նյութերը ըստ Հայկական ՍՍՌ Ժողտնտխորհի տվյալների։

Սոցիալիզմի ժամանակ տնտեսական շրջանների միջև հարաբերությունները կրում են բոլորովին այլ բնույթ։ Տնտեսական կապերի հիմքում ընկած է արտադրության միջոցների սոցիալիստական սեփականությունը, որի շնորհիվ տնտեսական փոխհարաբերությունները կրում են ընկերական փոխօգնության և համագործակցության բնույթ և զարգանում են ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության միասնական պլանով, որը բոլոր վարչատնտեսական շրջանների էկոնոմիկան միահյուսում է միասնական ամբողջականության մեջ։

Սոցիալիստական տերիտորիալ աշխատանքի բաժանման և արտադրական մասնագիտացման պայմաններում տնտեսական շրջանների միջև պլանայնորեն զարգացող կապերն արտահայտվում են նրանով, որ յուրաքանչյուր միութենական ռեսպուբլիկա, յուրաքանչյուր տնտեսական շրջան պլանով նախատեսված իր բաժինն է ներդնում ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման ընդհանուր և միասնական ֆոնդի մեջ և փոխարենը այդ ընդհանուր ֆոնդից, մյուս տնտեսական շրջաններից ստանում է այն, ինչ անհրաժեշտ է իր ժողովրդական տնտեսության զարգացման համար։ Այդ դեպքում, վարչա-տնտեսական շրջանները հնարավորություն ունեն հանդես բերելու տեղական նախաձեռնություն՝ արտադրության մասնագիտացման և տնտեսական ուրիշ շրջանների հետ ավելի նպատակահարմար կապերի իրագործման համար։

Ներկայումս Հայաստանը, ինչպես և երկրի մյուս վարչա-տնտեսական շրջանները, ունի միջշրջանային տնտեսական կապերի բարդ սիստեմ։ Կոոպե-

բացման ուղղությամբ կապերի տարբեր ձևերի հետ միասին, տնտեսական շրջանները երկրի ժողովրդական տնտեսության հետ կապված են մեքենաների ու սարքավորումների, հումքի, կիսաֆաբրիկատների, թեթև և սննդի արդյունաբերության ապրանքների մատակարարման միջոցով, կարևորագույն արդյունաբերական օբյեկտների համատեղ շինարարությամբ, գիտության ու տեխնիկայի նվաճումների և փորձի փոխանակմամբ, որոնք կազմում են միջշրջանային տնտեսական կապերի ամբողջություն։

Սովետական իշխանության տարիներին Հայաստանը դարձել է ծաղկող, արդյունաբերությամբ զարգացած ռեսպուբլիկա։ Երկրի ինդուստրացմա: և տնտեսական շրջանների մասնագիտացման ընթացքում անընդհատ ընդլայնվում են և ամրապնդվում Հայկական ՍՍՌ-ի տնտեսական փոխհարաբերությունները միութենական ռեսպուբլիկաների և տնտեսական շրջանների հետ։ Բավական է ասել, որ այժմ Հայաստանն իր արտադրանքն ուղարկում է Սովետական Միության գրեթե բոլոր վարչա-տնտեսական շրջանները։ Հիմնականում արտահանվում են էլեկտրամեքենաշինության, սարքաշինության, մեքենաշինության, քիմիական արդյունաբերության, գունավոր մետաղամշակության, շինանյութերի, թեթև և սննդի արդյունաբերության արտադրանքները։

Ծտպատերազմյան տարիներին ռեսպուբլիկայում զարգանում է միութենական նշանակություն ունեցող մեքենաշինությունը։ Եթե համեմատաբար վերջերս Հայաստանը ներմուծում էր մեքենաների և սարքավորումների բոլոր տեսակները, ապա այժմ ինքն է Սովետական Միության տարբեր շրջաններն ուղարկում էլեկտրատեխնիկայի և մեքենաշինության մեծ քանակությամբ արտադրանք։ Հայաստանի էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը մատակարարում է շարժական էլեկտրակայաններ, ուժային տրանսֆորմատորներ, էլեկտրաշարժիչներ, բազմատեսակ ճշգրիտ սարքավորումներ, ժամացույցներ, սնուցման ագրեգատներ, ղեկավարման վահաններ, էլեկտրակաբել և այլ ապրանքներ։ Միաժամանակ հարկավոր է նշել, որ էլեկտրատեխնիկական արդյունաբերության արտադրանքի մի շարք կարևորագույն տեսակների արտադրությամբ Հայաստանը Սովետական Միության մեջ գրավում է առաջատար տեղերից մեկը։ 1959 թ. Հայաստանին բաժին էր ընկնում մինչև 100 կիլովատ հզորության փոփոխական հոսանքի գեներատորների արտադրության 26,4 տոկոսը, 100-ից ավելի կիլովատ հզորության գեներատորների՝ 40,7 տոկոսը, ուժային տրանսֆորմատորների՝ 7,5 տոկոսը, շարժական էլեկտրակայանների՝ 22,5 տոկոսը։

Մեքենաշինական արդյունաբերությունը արտահանում է մետաղահատ և հղկող հաստոցներ, կենտրոնախույս պոմպեր, կոմպրեսորներ, շուտովիկի մամլակներ, գանազան արմատուրա։ Սոցիալիստական ինդուստրացման իրականացման և մեքենաշինության զարգացման շնորհիվ մեքենաների և սարքավորումների տեսակարար կշիռը Հայաստանից արտահանվող ապրանքների մեջ դգալիորեն ավելացել է և այժմ կազմում է 17 տոկոս։

Գունավոր մետաղամշակության արտադրանքներից Հայաստանը արտահանում է ռաֆինացված ու սև պղինձ, կապարի և անագի կոնցենտրատներ, ալյումին, մոլիբդեն, շինանյութերի արդյունաբերության արտադրանքից՝ ցեմենտ, թերթաքար, հրակայուն առարկաներ, շինարարական տուֆ։ Հայաստանի քիմիական արդյունաբերությունը երկրին մատակարարում է սինթետիկ կաուչուկ, կալցիումի կարբիդ, ցինապլավ մոնոխրոմատ, ասբովինիլային

գանգված, վինիֆլեքս, ճարպային և քացախային թթուներ, ամիակային սելիտրա, լաքեր ու ներկեր, ավտոդողեր, հանքային պարարտանյութեր։

Հայաստանից արտահանվող ապրանքների մեջ մեծ տեղ է պատկանում թեթև և սննդի արդյունաբերության արտադրանքներին։ Թեթև արդյունաբերության հիմնական ապրանքներից կարելի է նշել կոշկեղենը, տրիկոտաժեղենը, մետաքսե և բամբակե գործվածքները, մետաքսահումքը, բամբակյա մանրաթելը, բրդյա գործվածքները, մորթեղենը, գորգերը և այլն, սննդի արդյունաբերության արտադրանքից՝ մրգերի և բանջարեղենի պահածոները, կոնյակներն ու գինիները, հանքային ջրերը, տնտեսական և ձեռքի օճառները, ծխախոտը։

Միութենական ռեսպուբլիկաների հետ տնտեսական փոխհարաբերությունների մեջ Հայաստանը ավելի սերտ կապեր ունի ՌՍՖՍՌ-ի հետ, որը միջշրջանային փոխանակման տերիտորիալ տեղաբաշխման մեջ գրավում է առաջին տեղը։

1960 թվականին Հայաստանի ձեռնարկությունները ՌՍՖՍՌ-ին մատակարարել են շարժական էլեկտրակայաններ ԴԷՍ—50, ԴԷՍ—30, ԺԷՍ—4, մինչև 100 կիլովատ և 100 կիլովատից բարձր հզորության գեներատորներ, էլեկտրաշարժիչներ, ուժային տրանսֆորմատորներ, ճշգրիտ սարքավորումներ, բազմատեսակ խիմիկատներ, ցեմենտ, թերթաքար, ավտոդողեր և այլն։ Էլեկտրատեխնիկական և քիմիական արդյունաբերության արտադրանքի հետ միասին Հայաստանը ՌՍՖՍՌ-ի տնտեսական շրջաններն է ուղարկում թեթև և սննդի արդյունաբերության ապրանքներ, այդ թվում կոշկեղեն, տրիկոտաժեղեն, մետաքսե և բամբակե գործվածքեղեն, բամբակի մանրաթել, բրդյա գործվածքեղեն, կաշվի հումք, մրգի և բանջարեղենի պահածոներ, կոնյակներ ու գիներ, հանքային ջրեր, ծխախոտ։ Մյուս ռեսպուբլիկաների թվում ՌՍՖՍՌ-ից հետո գալիս է Ուկրաինական ՍՍՌ-ն, որը հանդիսանում է մեքենաշինական, էլեկտրատեխնիկական, քիմիական արդյունաբերության, գունավոր մետաղամշակության, թեթև ու սննդի արդյունաբերության ապրանքների մեծ սպառող։ Նույնանման ապրանքներ են ուղարկվում Մերձբալթյան ռեսպուբլիկաները, Միջին Ասիայի ու Անդրկովկասի ռեսպուբլիկաները և ՍՍՌՄ-ի ուրիշ տնտեսական շրջաններ։

Հայկական ՍՍՌ ԺՏԽ արդյունաբերության առանձին ճյուղերի ունեցած տեսակարար կշիռը ապրանքների արտահանման մեջ 1959 թ.։[1]

Արդյունաբերության ճյուղերը՝ տոկոսներով.

Ընդամենը		100
Քիմիական արդյունաբերություն	—	18,8
Մեքենաշինություն և հաստոցաշինություն	—	4
Շինանյութերի արդյունաբերություն	—	20,5
Գունավոր և լեռնահանքային արդյունաբերություն	—	3,5
Էլեկտրատեխնիկական և սարքաշինական արդյունաբերություն	—	13
Թեթև արդյունաբերություն	—	2,2
Սննդի արդյունաբերություն	—	39

[1] Ցուցակը կազմված է Հայկ. ՍՍՌ ԺՏԽ նյութերի հիման վրա (մոտավոր հաշվումներով)։ Այդ նյութերից են վերցված նաև մյուս տվյալները։

Դիտելով Հայկական ՍՍՌ-ից ապրանքների առտահանման կառուցվածքը, հարկավոր է նշել, որ այն համապատասխանում է ռեսպուբլիկայի ինդուստրիալ զարգացման բարձր մակարդակին. այն ցույց է տալիս ժողովրդական տնտեսության նպատակային (նպատակահարմար) մասնագիտացման և նրա բոլոր ճյուղերի ռացիոնալ զարգացման առավելությունները սոցիալիստական տերիտորիալ աշխատանքի բաժանման ժամանակ։

Իր հերթին Սովետական Միության բոլոր ծայրերից Հայաստան են ներմուծվում բազմատեսակ ապրանքներ։ Ուրալյան, Արևմտա-Սիբիրական և Ուկրաինական գործարաններից Հայաստանը ստանում է չուգուն, պողպատ, գլանվածք, խողովակներ։ Մոսկվայի, Լենինգրադի մարզերը, Ուրալը, Արևմտյան և Արևելյան Սիբիրը Հայաստան են ուղարկում մեքենաներ ու սարքավորումներ, տրանսպորտի միջոցներ։ Ստալինգրադից, Խարկովից, Ռոստովից Հայաստանն ստանում է գյուղատնտեսական մեքենաներ՝ տրակտորներ, կոմբայններ և այլն։ Ուկրաինական ՍՍՌ-ն ուղարկում է մետաղահատ հաստոցներ, դարբնոցա-մամլակային սարքավորում, հացահատիկ, շաքար։ Տեքստիլ ապրանքները ներմուծվում են Մոսկվայի, Վլադիմիրի և Իվանովոյի տնտեսական շրջաններից։ Անդրկովկասյան ռեսպուբլիկաներից Հայաստանն ընդունում է նավթամթերքներ՝ Ադրբեջանական ՍՍՌ-ից, քարածուխ, ցեմենտ, մետաղահատ հաստոցներ, ցիտրուսներ՝ Վրացական ՍՍՌ-ից, Միջին Ասիայից՝ բամբակ, կաշվի հումք, մետաղներ։ Մերձբալթյան ռեսպուբլիկաները Հայաստանին մատակարարում են տեքստիլ և կարի ապրանքներ, ռադիոտեխնիկական և էլեկտրատեխնիկական արտադրանք, ձկան պահածոներ, կահույք։ Տնտեսական կապերի զարգացման և ընդլայնման հետ մեկտեղ ամեն տարի ավելանում է նաև ներմուծվող և արտահանվող ապրանքների քանակը, որի մասին ակնառու կերպով վկայում են երկաթուղու բեռների ընդունման և առաքման վիճակագրական տվյալները։

Բեռների ընդունումն ու առաքումը Հայկական ՍՍՌ-ում (հազար տոննաներով)[2]:

	1940 թ.	1950 թ.	1955 թ.	1958 թ.	1959 թ.	1959 թ. տոկոսով			
						1940	1950	1955	1958
Բեռների ընդունումը	2257	3248	4772	6887	7429	3292	2287	155.6	107.9
Բեռների առաքումը	1424	2282	3722	5296	5717	4015	2505	1536	108.1

Ինչպես ցույց են տալիս թվերը 1959 թվականին բեռների ընդունումը Հայկական ՍՍՌ-ում, 1940 թ. հետ համեմատած, ավելացել է 3,2 անգամ, իսկ բեռների առաքումը Հայկական ՍՍՌ-ից՝ 5,7 անգամ։

---

[2] Աղյուսակը կազմված է «Սովետական Հայաստանը 40 տարում» վիճակագրական ժողովածուի և «Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը 1957 թ.» վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա։

Միջշրջանային տնտեսական կապերի սիստեմում կարևորագույն տարրերից են հանդիսանում կոոպերացման կապերը,— տարբեր տնտեսական շրջանների ձեռնարկությունների ուղղակի և երկարատև կապերը։ Ինչպես հայտնի է, միջշրջանային կոոպերացման էությունը կայանում է նրանում, որ տարբեր տնտեսական շրջանների ձեռնարկությունները համատեղ մասնակցում են որևէ բարդ արդյունքի պատրաստմանը։ Այդպիսի անմիջական կապը նախատեսում է պայմանագրային ստույգ հարաբերությունների առկայություն մատակարարողի և սպառողի միջև, նշելով նրանց պարտականությունները՝ ճիշտ սահմանված ժամկետում որոշ տեսակի, որակի և քանակի արտադրանքի պատրաստման գործում։ Կոոպերացման ուղղությամբ միջշրջանային կապերը իրականացվում են ինչպես պողպատի և չուգունի ձուլվածքի, կռանվածքի, դրոշմատիպերի, մեքենաների որոշ կարևորագույն հանգույցների և դետալների միջոցով։ Սպեցիալիզացիոն մատակարարումների ձևով, այնպես էլ կոմպլեկտավորման ուղղությամբ միջշրջանային մատակարարումների ձևով։

1960 թվականին Հայկական ՍՍՌ Ժողովրդական տնտեսության խորհրդի ձեռնարկություններին պողպատի և չուգունի ձուլվածք, դրոշմատիպ, կռանվածք, ինչպես նաև մեքենաների մի շարք կարևորագույն հանգույցներ ու դետալներ էին մատակարարում երկրի տարբեր տնտեսական շրջանների 14 ժողտնտխորհներ, այդ թվում միայն 8-ը Ռուսաստանյան Ֆեդերացիայից։ Պողպատի ձուլվածքի մատակարարումների ամենամեծ տեսակարար կշիռը բաժին էր ընկնում ՌՍՖՍՌ-ին՝ 510 տոննա, այսինքն 60 տոկոսից ավելին։ Պողպատի ձուլվածքի մնացած մասը մատակարարում էին Ուկրաինական ՍՍՌ-ն՝ 25 տոկոս, Վրացական ՍՍՌ-ն՝ 15 տոկոս։ Չուգունի ձուլվածքի կոոպերացված մատակարարումների ուղղությամբ գերակշռող դերը պատկանում է Ուկրաինական ՍՍՌ-ին՝ 50 տոկոսից ավելի, այնուհետև գալիս է Գորկու Ժողտնտխորհը (ՌՍՖՍՌ), որը չուգունի ձուլվածք է մատակարարում Երևանի Պահեստամասերի գործարանին։ Վրացական ՍՍՌ-ի Ժողտնտխորհի «Ցենտրոլիտ» գործարանը քիմիական արդյունաբերության համար Կիրովականի Քիմիական կոմբինատ է ուղարկում տեխնոլոգիական սարքավորման դետալների ձուլվածքներ։ Ադրբեջանական ՍՍՌ-ի Ժողտնտխորհի Մոնտինի անվան գործարանը ուղարկում է չուգունի ձուլվածք, մասնավորապես պոմպերի դետալների ձուլվածքներ՝ Երևանի Կիրովի անվան գործարանին՝ հաստատված անվանացուցակով։

Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունների համար ՌՍՖՍՌ-ի գծով կռանվածքներ ու դրոշմատիպեր են ուղարկում՝ Ստալինգրադի ԺՏԽ-ն՝ կռանվածքներ Երևանի Ավտոպահեստամասերի գործարանի համար, Ուդմուրտիայի ԺՏԽ-ն՝ գեներատորների լիսեռների համար, դրոշմատիպեր՝ Երևանի Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանի համար, Չելյաբինսկի ԺՏԽ-ն՝ ծնկաձև լիսեռների դրոշմատիպեր՝ Երևանի Կոմպրեսորային գործարանի համար։

Գորկու ԺՏԽ-ն Հայաստանի ԺՏԽ-ին մատակարարում է մեքենաների մի շարք կարևորագույն հանգույցներ ու դետալներ։ Ուկրաինական ռեսպուբլիկայի գծով, տեխնոլոգիական սարքավորման դետալների կռանվածքներ է ուղարկում Դնեպրոպետրովսկի ԺՏԽ-ը, հանքահորային աղացների լիսեռների կռանվածքներ՝ Լուգանսկի ԺՏԽ-ը, բարձր ճնշման կոմպրեսորների դետալների կռանվածքներ՝ Ստալինոյի ԺՏԽ-ը։ Վրացական ՍՍՌ-ից Երևանի Ավտոպահես-

տամասերի գործարանի համար դրոշմատիպեր է ուղարկում Քութահիի Ավտոմոբիլային գործարանը։

Միջռեսպուբլիկական կոոպերացված մատակարարումները մեծ նշանակություն ունեն ռեսպուբլիկայի էկոնոմիկայի հետագա զարգացման համար։ Ահա թե ինչու միջռեսպուբլիկական կոոպերացված մատակարարումների պլանների ժամանակին կատարումը գտնվում է պլանային և տնտեսական օրգանների ուշադրության կենտրոնում։

Միութենական ռեսպուբլիկաների միջև տնտեսական համագործակցությունն իրականացվում է նաև արդյունաբերական կարևորագույն օբյեկտների համատեղ շինարարության ձևով։ Այսպես. սկսվել է Երևան—Թբիլիսի ռադիոռելեի գծի շինարարությունը, որը հնարավորություն կտա հեռուստատեսային հաղորդումներ ընդունել Սովետական Միության տարբեր քաղաքներից։ Կառուցվում է Ադստաֆա—Աթարբեկյան ԳԷՍ էլեկտրահաղորդման գիծը, որը կկապի Հայաստանի և Վրաստանի էներգասիստեմները։ Եվ հեռու չէ այն օրը, երբ կավարտվի Մինգեչաուրի ԳԷՍ-ը Հայաստանի էներգասիստեմի հետ կապող էլեկտրահաղորդման շինարարությունը։ Ուրախալի իրադարձություն հանդիսացավ ադրբեջանական գազի մուտքը Հայաստան ու Վրաստան։ Ղարադաղ—Ադստաֆա—Թբիլիսի—Երևան գազամուղը աշխատավորների կողմից իրավացիորեն անվանվել է «Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության գազամուղ»։

Հայկական ՍՍՌ-ի տնտեսական կապերը չեն բավարարվում մեր Հայրենիքի սահմաններով։ Միութենական մյուս ռեսպուբլիկաների հետ միասին Հայաստանը գործարար մասնակցություն է ցույց տալիս արտասահմանյան երկրների հետ Սովետական Միության արտաքին տնտեսական կապերին։ Նախապատերազմյան ժամանակաշրջանում Սովետական Հայաստանը չէր կարող խոշոր դեր խաղալ երկրի տնտեսական կյանքում և, առավել ևս, արտասահմանի հետ ունեցած արտաքին կապերի մեջ։ Հայաստանի արտահանության հիմքում այն ժամանակ ընկած էին թեթև ու սննդի արդյունաբերության արտադրանքը և տնայնագործական առարկաները։ Այնպիսի կարևորագույն ապրանքները, ինչպիսիք մեքենաներն ու սարքավորումներն են, իսպառ բացակայում էին ռեսպուբլիկայի արտահանության մեջ։ Ներկայումս Հայաստանի Ժողտնտխորհի ձեռնարկությունների արտադրանքն արտահանվում է աշխարհի ավելի քան 30 երկրներ։ Եթե 1958 թվականին արտահանվող արտադրանքի մեջ մտնում էին տարբեր տեսակի 48 ապրանքներ, ապա այժմ այդ թիվը հասել է 70-ի։ Հայաստանը արտահանում է մեքենաշինության, սարքաշինության, քիմիական արդյունաբերության, գունավոր մետաղամշակության, ինչպես նաև սննդի արդյունաբերության արտադրանք։ Ընդսմին մեքենաներին և սարքավորումներին բաժին է ընկնում մոտ 21 տոկոսը։ Հայկական ՍՍՌ-ի ձեռնարկությունները արտասահման են ուղարկում շարժական էլեկտրակայաններ, գեներատորներ, էլեկտրամոտորներ, ղեկավարման վահաններ, սնուցման ագրեգատներ, ուժային տրանսֆորմատորներ, կոմպրեսորներ, կենտրոնախույս պոմպեր, ալյումին, պղնձարջասպ, կոնյակներ, գինիներ, ծխախոտ և մի շարք այլ ապրանքներ։ Հայաստանի Ժողտնտխորհի ձեռնարկությունների արտադրանքը արտահանվում է բոլոր սոցիալիստական երկրները։ Այդ երկրներից առաջին տեղը գրավում է Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկան։ 1960 թվականին Չինաստան արտահանվող ապրանքների մեջ մտնում էին շարժական էլեկտրակայաններ, տրանս-

ֆորմատորներ, գեներատորներ, կենտրոնախույս պոմպեր, մետաղահատ հաստոցներ, էլեկտրակարել, սինթետիկ կաուչուկ, պահածոներ, կոնյակներ ու գինիներ։

Հայկական վարչա-տնտեսական շրջանի մարկան կրող արտադրանքը ուղարկվում է նաև կապիտալիստական շատ երկրներ, այդ թվում Մերձավոր ու Միջին Արևելքի (Արաբական Միացյալ Ռեսպուբլիկա, Աֆղանստան) և Հարավային ու Հարավ-Արևելյան Ասիայի (Հնդկաստան, Պակիստան, Ինդոնեզիա, Բիրմա, Կամբոջա) տնտեսապես թույլ զարգացած երկրները։ Հայաստանի արտադրանքը ներմուծում են նաև Եվրոպական երկրներ՝ Հունաստանը, Իտալիան, ԳՖՌ-ն, Ավստրիան, Լատինական Ամերիկայի երկրներից՝ Չիլին, Ուրուգվայը, Արգենտինան։

Այս դեպքում հարկավոր է նշել, որ արդյունաբերության և շինարարության ղեկավարման կազմակերպման վերակառուցումը և ժողտնտխորհների ստեղծումը դրական ազդեցություն թողեցին այտահանվող պատվերների կատարման վրա։ 1960 թվականին Հայկական ՍՍՌ ԺՏԽ-ի արդյունաբերական ձեռնարկությունների արտահանության ծավալը, 1957 թվականի հետ համեմատած աճել է 1,8 անգամ։

Հայաստանի արդյունաբերությունը մեքենաների ու սարքավորումների արտահանությամբ մասնակցում է այն ձեռնարկությունների շինարարությանը, որոնք Սովետական Միության օգնությամբ կառուցվում են արտասահմանյան երկրներում։ Հայաստան ԺՏԽ-ի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքը ուղարկվում է այն 70 ձեռնարկությունների շինարարության համար, որոնք ՍՍՌՄ-ի աջակցությամբ կառուցվում են Չինաստանում, Լեհաստանում, Չեխոսլովակիայում, Աֆղանստանում, Բիրմայում, Կամբոջայում, Եմենում։

Հայաստանի էլեկտրատեխնիկական և մեքենաշինական արդյունաբերությունը իր արտադրանքի արտահանությամբ օգնություն է ցույց տալիս Բհիլայիի մետաղամշակման կոմբինատի (Հնդկաստան), Բոմբեյի (Հնդկաստան) և Ռանգունի (Բիրմա) տեխնոլոգիական ինստիտուտների, Պնոմ-Պենի (Կամբոջա) հոսպիտալի շինարարությանը։ 1959 թվականին Երևանի Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական և կոմպրեսորների գործարանները առաջին անգամ շարժական էլեկտրակայաններ ու կոմպրեսորներ ուղարկեցին Ասուանի բարձրադիր ամբարտակի կառուցման համար, որը վեր է խոյանում ՄԱՌ-ում՝ Սովետական Միության նախագծով և տնտեսական ու տեխնիկական աջակցությամբ։ Բացի այդ, սկսած այս տարվանից Հայաստանը, որը հանդիսանում է գլխավոր մատակարարողը, օգնություն ցույց կտա Բաղդադում (Իրաք) էլեկտրատեխնիկական գործարանի շինարարությանը։

Սոցիալիստական երկրների միջև տնտեսական կապերում կարևոր տեղ է գրավում գիտա-տեխնիկական համագործակցությունը։ Հայաստանը, ինչպես նաև սովետական մյուս ռեսպուբլիկաները, մասնակցում է այդ համագործակցությանը, որը վկայում է ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեծ վերելքի մասին։ Հայաստանը ավելի ու ավելի լայն մասնակցություն է հանգես բերում միջազգային ցուցահանդեսներում։ Միայն 1959 թվականին Հայկական ՍՍՌ-ի Ժողտնտխորհի ձեռնարկությունների արտադրանքը ցուցադրվել է 16 տոնավաճառներում և ցուցահանդեսներում, այդ թվում Նյու-Յորքում,

Մեխիկոյում, Կոլոմբոյում, Իզմիրում, Դամասկոսում, Հելսինկիում, Նյուդելիում, Լեյպցիգում, Բոնոյում։

Տնտեսական կապերը միութենական ռեսպուբլիկաների և մյուս վարչատնտեսական շրջանների միջև, յոթնամյա պլանի իրականացման զուգընթաց, հետագա զարգացում կստանան։

Եթե դեռևս ոչ շատ անցյալում մի շարք միութենական ռեսպուբլիկաներ Ռուսաստանյան Ֆեդերացիա էին ուղարկում առավելապես հումք, փոխարենը ստանալով մեքենաներ ու սարքավորումներ, ապա այժմ արդյունաբերության արտադրության ձեռք բերված մակարդակը հնարավորություն է ընձեռնում նշանակալիորեն ընդլայնել պատրաստի ապրանքների փոխադարձ մատակարարման անվանացանկը։ Հայաստանը առաջվա նման կարտահանի իր արտադրության համար տրադիցիա դարձած ապրանքներ, միաժամանակ ավելացնելով էլեկտրատեխնիկական, մեքենաշինական, սարքաշինական արդյունաբերության արտադրանքի մատակարարումները։ Միջշրջանային և միջռեսպուբլիկական տնտեսական կապերի ռացիոնալիզացիան, խելացի մասնագիտացումը և ճիշտ կոոպերացումը՝ ժողովրդական տնտեսության մեծ պրոբլեմ են։ Այդ պրոբլեմը հարկավոր է ուսումնասիրել և լուծել առանց հապաղման։

Այնուամենայնիվ, եթե ժողտնտխորհների կազմավորման օրից անցած տարիների ընթացքում ձեռք են բերվել մեծ հաջողություններ արդյունաբերության պլանավորման բնագավառում, ապա միջշրջանային տնտեսական կապերի պլանավորման գործում դեռևս հարկ կա շատ բան անելու։ Չի կարելի, օրինակ, հանդուրժել չափից դուրս հեռու, ոչ ռացիոնալ և հանդիպակաց փոխադրումների առկայության փաստերը։ Հայաստանն ունի ռետինի զարգացած արդյունաբերություն, բայց միևնույն ժամանակ ռետինատեխնիկական շատ առարկաներ ներմուծվում են մյուս տնտեսական շրջաններից։

Ամեն տարի ռեսպուբլիկայի ձեռնարկությունները արտադրում են մեծ քանակությամբ տարբեր տեսակի մետաղահատ հաստոցներ, բայց, չգիտես ինչու, նույնանման հաստոցներ ներմուծվում են երկրի մյուս տնտեսական շրջաններից։ Նույնը կարելի է ասել ուժային տրանսֆորմատորների և էլեկտրաշարժիչների մի շարք տեսակների վերաբերյալ։ Երևանի էլեկտրատեխնիկական գործարանի կողմից 1960 թվականի արտադրական պլանը չկատարելը բացատրվում է նրանով, որ Խարկովի տնտեսական շրջանից ժամանակին չստացվեցին կոմպլեկտավորվող առարկաները, մասնավորապես փաթաթման լարերը, և դա այն ժամանակ, երբ շատ մոտիկ գտնվում է Կաբելի հզոր գործարանը, որտեղ միանգամայն հնարավոր է կազմակերպել հենց այդպիսի լարերի արտադրությունը։ Նման օրինակներ շատ են։

ՍՍՌՄ Գերագույն Սովետի 7-րդ սեսիայում Ն. Ս. Խրուշչովը խոսելով տարբեր ժողտնտխորհների արդյունաբերության տնտեսական կապերի կարևորության մասին, ընդգծեց, որ Պետպլանի ամենագլխավոր խնդիրներից մեկը պետք է լինի վերլուծման ենթարկել այդ կապերը, պայմաններ ստեղծել առավել նպատակահարմար տնտեսական կապերի զարգացման համար և ակտիվ միջամտություն հանդես բերել ոչ ռացիոնալ կապերի հայտնաբերման դեպքում։

Դրա հետ միասին պետք է նշել, որ ռեսպուբլիկայում անհրաժեշտ ուշադրություն չի նվիրվում միջռեսպուբլիկական և միջշրջանային կապերի բարեփոխման գործին։ Մեզ թվում է, հասել է այն ժամանակը, որպեսզի Հայկական ՍՍՌ Պետպլանը զբաղվի միջշրջանային տնտեսական կապերի ամբողջ կոմպ-

լեքսով։ Այդ կապակցությամբ անհրաժեշտ է առաջին հերթին Հայաստանի տնտեսական կապերի հաշվառման և պլանավորման գործը կենտրոնացնել մեկ միացյալ տեղում։

Միջշրջանային և միջռեսպուբլիկական տնտեսական կապերի առավել նպատակահարմար սիստեմ ստեղծելու գործին էապես կօգնի Ռեսպուբլիկայի Պետպլանին առընթեր հատուկ բաժնի կամ սեկտորի կազմակերպումը, որի իրավասության մեջ կմտնեն արտահանվող և ներմուծվող արտադրանքի բոլոր տեսակները (ներառյալ նատուրալ և արժեքային արտահայտություններով)։ Արտահանվող և ներմուծվող արտադրանքի բոլոր տեսակների օպերատիվ հաշվառումը ռեալ հնարավորություններ կստեղծի ինչպես հանրային արտադրության տեղամասերի, այնպես էլ ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի գծով միջշրջանային փոխանակության կառուցվածքը մանրազնին կերպով ուսումնասիրելու համար՝ հետագայում միջշրջանային և միջռեսպուբլիկական տնտեսական կապերի առավել նպատակահարմար, գիտականորեն հիմնավորված սխեմաներ մշակելու և կազմելու նպատակով։

Միջշրջանային և միջռեսպուբլիկական տնտեսական կապերի ճիշտ կազմակերպումն ու կատարելագործումը հանդիսանում է Հայկական ՍՍՌ Պետպլանի և Ժողտնտխորհի կարևորագույն խնդիրը։ Միջշրջանային տնտեսական կապերի սիստեմի բարեփոխումը թույլ կտա ժողովրդական տնտեսության համար խնայել տասնյակ և հարյուր միլիոնավոր ռուբլիներ և երկրին կբերի հրսկայական տնտեսական էֆեկտ։